


**ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
 Մ.ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ**

**2026-2027 թթ. ուսումնական տարվա «Շինարարական ճարտարագիտություն», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» հոսքերի 10-րդ դասարանի ընդունելության «Ֆիզիկա» առարկայից**


**գիտելիքների ստուգման**

**Տոմսի նմուշ**


1. (1միավոր) Տրված գրաֆիկներից որո՞նք են համապատասխանում X առանվերդ ուղղաձիծ հավասարաչափ շարժմանը.



ա)



բ)



գ)



դ)

1) ա և դ

2) բ և գ

3) ա և գ

4) բ և դ:

2. (1միավոր) Քանի՞ անգամ է ժամացույցի բոլոր ցույց սլաքի պտտման պարբերությունը փոքր ժամսլաքի պտտման պարբերությունից.

1) 6

2) 12

3) 24

4) 36:

3. (1միավոր) Ո՞րն է ուժի միավորն ըստ ՄՀ-ի հիմնական միավորների.

1) 1կգ·մ/վ<sup>2</sup>

2) 1կգ·մ

3) 1կգ·մ<sup>2</sup>/վ<sup>2</sup>

4) 1կգ·մ/վ:

4. (1միավոր) Մարմինը գտնվում է դադարի վիճակում: Քանի՞ անգամ կփոխվի դադարի շփման ուժը, եթե նրա վրա ազդող ուժը մեծանա 3 անգամ.

1) կմեծանա 3 անգամ

2) կփոքրանա 3 անգամ

3) չի փոխվի

4) միարժեք հարցին պատասխանելն անհնար է:

5. (1միավոր) Ի՞նչ մեծությունից է կախված մարմնի կինետիկ էներգիան.


1) Երկրի զանգվածից և շառավիղից,

2) մարմնի զանգվածից և Երկրի մակերևույթից ունեցած բարձրությունից,

3) մարմնի զանգվածից և արագությունից,

4) մարմնի խտությունից և արագությունից:

6. (1միավոր) Նկարում պատկերված գնդերի միջև տեղի է ունենում ոչ առաձգական բախում (գնդերը կանոն են միմյանց): Ո՞ր կողմ և ի՞նչ արագությամբ կշարժվեն գնդերը.



- 1) 3մ/վ աջ                      2) 3մ/վ ձախ                      3) 1.5մ/վ աջ                      4) 1.5մ/վ ձախ:


7. (1միավոր) Ի՞նչ ճնշում է գործադրում ձյան վրա կանգնած  $m$  զանգվածով մարդը, եթե նրա մեկ կոշիկի հենման մակերեսը  $S$  է.

- 1)  $mg/S$                       2)  $mg/2S$                       3)  $2mg/S$                       4)  $2S/mg$ :

8. (1միավոր) Մեծությունների  $n$ ՞ր գույգից է կախված մաթեմատիկական ճոճոնակի փոքր տատանումների պարբերությունը.

- 1) զանգված և տատանման լայնույթ,                      2) զանգված և ազատ անկման արագացում,  
3) թելի երկարություն և զանգված,                      4) թելի երկարություն և ազատ անկման արագացում:


9. (1միավոր) Նկարում պատկերված շղթայի  $R$  դիմադրությունով անցնում է  $I$  հոսանք: Ի՞նչ հոսանք է անցնում  $2R$  դիմադրությունով.



- 1)  $3I$                       2)  $2I$                       3)  $I$                       4)  $0.5I$ :

10. (1միավոր) Առարկայի  $h$  հեռավորությունն ուսանյակից հավասար է  $3F$ : Ինչպիսի՞ն է առարկայի պատկերը.


- 1) շրջված և խոշորացված,  
2) ուղիղ և փոքրացված,  
3) ուղիղ և խոշորացված,  
4) շրջված փոքրացված:



11. (1միավոր) Դադարի վիճակից հավասարաչափ արագացող շարժում կատարող ավտոմեքենան  $8$  վայրկյանում անցավ  $200$ մ ճանապարհ: Որոշել նրա վերջնական արագությունը:

12. (1միավոր) Քարը նետեցին ուղղաձիգ դեպի վեր  $30$ մ/վ սկզբնական արագությամբ: Ի՞նչ ճանապարհ կանցնի քարն իր ամբողջ թռիչքի ընթացքում:

13. (1միավոր) 1մ/վ արագությամբ շարժվող 0.2կգ զանգվածով գունդը բախվում է 0.4կգ զանգվածով անշարժ գնդին: Բախումից հետո առաջին գունդը հետ է թռչում 0.5մ/վ արագությամբ: Ի՞նչ արագություն է ձեռք բերում անշարժ գունդը:
14. (1միավոր) Մաթեմատիկական ճոճանակը 24 վայրկյանում կատարում է 12 տատանում: Որոշել ճոճանակի թելի երկարությունը:
15. (1միավոր) Կրակոցի ձայնն ու գնդակը միաժամանակ հասնում են 680մ բարձրության: Ձայնի արագությունն օդում 340մ/վ է: Որքա՞ն է ուղղաձիգ դեպի վեր նետված գնդակի սկզբնական արագությունը:
16. (1միավոր) 0.4մ<sup>3</sup> ծավալով և 20°C ջերմաստիճանի ջուրը խառնեցին 0.1մ<sup>3</sup> և 70°C ջերմաստիճան ունեցող ջրին: Որքա՞ն է ստացված խառնուրդի ջերմաստիճան:
17. (1միավոր) Մարմնի կշիռն օդում 74Ն է, իսկ հեղուկում ընկղմվելիս՝ 32Ն: Որոշել մարմնի վրա ազդող արքիմեդյան ուժը:
18. (1միավոր) Որքա՞ն է նկարում ամպերաչափի ցուցմունքը, եթե  $R=3$  Օմ, իսկ վոլտաչափի ցուցմունքը՝  $U=20$ Վ:



(19-20) Հավաքող բարակ ոսպնյակում առարկայի 5 անգամ խոշորացված կեղծ պատկերի հեռավորությունն ոսպնյակից 80սմ է:

19. (1միավոր) Որքա՞ն է առարկայի հեռավորությունն ոսպնյակից:
20. (1միավոր) Որքա՞ն է ոսպնյակի օպտիկական ուժը: